Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808612971 որոշումը անփոփոխ, իսկ գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<30>> 10 2018թ. 17.4-5918 ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վրեժ Մարգարյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Վրեժ Մարգարյանը դիմումով հայտնել է, որ վարել է OPEL մակնիշի 34 PV 744 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը և խնդրել ճանապարհային ոստիկանության թիվ 1808612971 որոշումը վերահասցեագրել իրեն:

‹‹Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին›› ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գանգատը (բողոքը կամ հայցադիմումը) կարող է ներկայացվել վարչական ակտի հասցեատիրոջ կամ խախտում կատարած անձի կողմից և պետք է պարունակի խախտումը կատարած անձի անունը, ազգանունը, վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը, ինչպես նաև դրան պետք է կցվեն գանգատը ներկայացնող անձանց անձնագրերի և տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթի պատճենները: Եթե տրանսպորտային միջոցն օգտագործվում է գրավոր պայմանագրի հիման վրա, ապա գանգատին (բողոքին կամ հայցադիմումին) պետք է կցվի նաև պայմանագրի պատճենը:

Նյութերի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Վրեժ Մարգարյանի կողմից ներկայացված ապացույցները չեն հիմնավորում թիվ 1808612971 որոշմամբ ամրագրված իրավախախտումը վերջինիս կողմից կատարված լինելու փաստը, քանի որ, դիմումին կից ներկայացված փաստաթղթերը վերաբերվում են այլ անձի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1808612971 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատն՝ առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակներն ուղարկել Վրեժ Մարգարյանին (հասցեն՝ Արագածոտնի մարզ, Աշնակ, 1փ., 1նրբ., 7փկղ., տուն 4), տրանսպորտային միջոցի սեփականատեր Ռաֆիկ Աբրահամյանին (հասցեն՝ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Շովրոյան փ., տ.78) և ՏՄՀԽԱ կենտրոն:

Ե.Կարապետյան